

ՄԷ. և ՄԸ.

ԲՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՌՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ

Երկու օրինակ ունի Վանքը այս Զեռագրին, մին կը կրէ 34 թուահամարը, միւրը 933 թուահամարը:

Առաջինը փոքրագիր կաշէկազմ հատոր մ'է, ունի 19 հր. մեղր մեծութիւն, 12 հր. մեղր լայնութիւն և 2,5 հր. մեղր թանձրութիւն, կը բաղկանայ 122 թերթէ, 244 էջ գրութեամբ, որ նոսր է, խիստ մաքուր և միասին՝ բամբակեայ հաստ թուղթի վրայ:

Երկրորդը՝ մեծագիր հաստ կաշէկազմ, լճապահուած, որ ունի 31,5 հր. մեղր մեծութիւն, 20,5 հր. մեղր լայնութիւն և 1,5 հր. մեղր թանձրութիւն. կը բաղկանայ 47 թերթէ 94 էջ գրութեամբ, որ նոսր է, մաքուր և երկսին, հաստ բամբակեայ թուղթի վրայ:

Երկու ձեռագրին գիրերը այնչափ համանման են՝ որ միեւնոյն գրչի արդիւնք կարելի է համարել զանոնք:

Առաջինն ունի Յիշատակարաններ, իսկ երկրորդը բնաւ, որով բաւ կը համարիմ գիտել միայն առաջինը, և խօսիլ անոր պարունակութեանը վրայ, որով երկրորդն ալ վրիպած չըլլար մեր ուսումնասիրութենէն:

* *

Ուստի այս հատորին առաջին էջին վրայ գրուած տեղերէն կ'իմանանք, թէ ձեռագիրն թարգմանութիւն է՝ Ճօան Պարթիստա ֆօռթայնօ իտալ. հեղինակին աշխատութեան, և թարգմանիչն եղած է Յօհաննէս վարդապետ Կ. Պօլսեցի:

Թարգմանութիւնը կատարուած է 1621 օգոստոսի 25 ին, Հոռոմի մէջ՝ ինչպէս կը յայտնէ Յիշատակարանը, որ է այսպէս.

Բնազննութիւն բոլորի մարմնոյ
մարդկայնոյ

Արտադրեցեալ 'ի Ճօան Պարթիստայէ ֆօռթայնոյ, և համապատեցեալ 'ի Յսանէյսկոսէ Ըստկոյրոյ:

Թարգմանեցեալ իսկ՝ 'ի Յօհաննէսէ վարդապետէ կոստանդնուպոլսեցոյ, 'ի գոարձոյրիս Հայկազանեաց:

Ըստ խնդրոյ՝ Պարոն Գասպարի որդոյ՝ Խօժոյ Սահրատի, 'ի յիշատակ անձին խոյ, և հոգոյ ծնողաց խորոց, և 'ի վայելումն շնտանեաց երթին, 'ի փաստ մեծացոյն Այ:

Յամի Փրկչին 1621 օգոստոսի 25:
ի Մեծն Հոռոմ. հրամանաւ Սր. Ժողովոյն:

և այս Զեռագրին ընդօրինակողն ալ երկու տեղ կ'արձանագրէ իւր Յիշատակութիւնը, հետեւեալ կերպով. նախ 202րդ էջին վրայ՝

« Յամի ՏՆ. 1772, Ն'ամսեանն Հոկտեմբերի 14, Գրեցաւ Զեռամբ Ստեփանն և ճոսի Քարտուղարի կոստանդնուպոլսեցոյ, և ապա՝ 244 էջին վրայ ըսելով.

« Փառք անբաժանելի Ամենասուրբ Եր. « յորդորեան Հօր և որդոյ՝ և հոգոյն Սրյ. « անսպառ յափտեցիս Ամեն.

Եղբորեացաւ այս մատնանս քարեխօսութեամբ տիրածին միշտ կոսիսն Ամեծօրհնեցեոյն Մարիամն ձեռամբ Ստեփաննոս Քարտուղարի կոստանդնուպոլսեցոյ:

Յամի Յափտեական ամենափրկչին մեռոյ 1772, Ն'ամսեանն Հոկտեմբերի 24:

ՏՕԳԹ. ՎԱՆՔԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ
(Շարունակելի)

ԲՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(1. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(Շար. տես բազմ. 1926 էջ 12)

Եղծը թուում է որ խնամութեան թելերով կապուած է նաև Բարսեղ կեսարացու վեցօրեայքի հայերէն թարգմանութեան և Լուսաւորչին վերագրած Յաճախապատահին: Հայ մատենագրութեան պատմութեան տեւսակէտից առանձնապէս կարեւոր են Եղծիկի հայ աղբիւրները, այն զրական գործերը

որ եղև են հնում և հասել են մեզ, որովհետև նրանց միջոցով կարելի էր լինի թերևս որոշել եզնիկի դիրքը միւս մասին. նազիրների շարքում: Ուշադրութեան արժանի են այն ընդհանուր կէտերը, որ նրբ-մարում են եզնիկի և յիշակ երկերի մէջ, ինչպէս կարելի է տեսնել հետեւեալ համեմատութիւններէ՝

Վեցօրեայք. Ճառ. Ա

Էջ 1. Որպիսի միտք ժամանեցսն արժանաւոր իրօք ընդ առաջ ելանել այնց ընթերցուածոց զոր լսելոց եմք, բայց եթէ որք արբաւիք և զգաստացեալք իցնի ի կառնաց մարմնաւորաց...:

Հմմ. եզնիկի յառաջարան, որի ընդհանուր միտքն է — պարտ է զմիտս յըստակել և զխորհուրդս սրբել:

Էջ 4. Կէսը ի փոխառփայլցն վրիպեցին ասել, թէ մինչև երևելի արարածոցս երևւեալ, փոշի մանրամաղ. Հմմ. եզ. էջ 228 հոդամաղ:

Էջ 14. Եւ իրք թեթև ընդ երեսս բարձրութեան երկնից վերանան և ծանունն յերկիր իջանել, Հմմ. եզ. 192. որ ինչ թեթև է ի վերին կողմն գնայ և որ ինչ ծանր է ի խոնարհ...:

Էջ 16. Զիրար թոյլ և ցիր բնութիւն կարող իցէ հանդարտիլ այսչափ ծանրութեան երկրի, որ հաստատեալ կայ ի վերայ նորա:

Հմմ. եզ. 192. որչափ ևս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի չէ հնար օղոյ ի վեր ունել:

Էջ 14. Եւ յայտ է, որ ինչ ի մէջ երկուց զլիաւորացս գտանի, ընդ նոսրի իրրեւ գնոսս արարեալ և հաստատեալ գտանի:

Հմմ. եզ. 194. պարտ է իմանալ, թէ ամենայն ինչ որ ի միջի նոցա գտանի, հարկ է զի ընդ նովին արարեալ իցէ:

1. 2. Թորոսեանը Եզնիկին նուիրած յօդածուն (Քազմ. 1889) ցոյց է տալիս, որ Եզնիկը զօտուել է Եպիփանից, և յիշում է անցողակի նորա աղբիւրը Վեցօրեայքի հետ և բերում է մի քանի օրինակներ, որոնցից միայն մէկն է յիշատակուած Մարիէսի մօտ: Ընդհանուր կէտերի տակէն են քան նկատուած է քայմս:

Ճառ. Բ.

Էջ 25. Զհիւղէ յայտ ասնեն... զի ասոնց գունոյ էր և առանց կերպարանաց և նմանութեանց... աստուած... ամ զնա ի գոյնս և ի կերպարանս և ի կարգս...:

Հմմ. եզ. 25. զոր հիւղ առ ձեռն զնիցն... որ անկերպարան և անզարդ տեսաւ նեմք զաշխարհս ի պէսպէս կերպարանս...:

Էջ 30. Բնութեան չար... այլ ինչ մի չար է որ ինչ յանձնէ եկաց... պատճառք մահու: Սկզբն մոլորութեան արկանել յոգիս մարդկան եթէ մարկիոնեոսայք և եթէ ծայրաճիւղք և եթէ պղտորեալ ուսմունք կողմանն Մանեայ...:

Հմմ. եզ. հերքելի աղանդները: Ծայր տեմիք (փոխ. ծայրոնցիք) համապատասխանում է յոյն քնագրի վաղեմականներին. οὐχὶ Μαρκιαν(ισ)τες, οὐχὶ οὐαλεντινοι εν-τεσθεν οὐχι ἡ βδελακτι τῶν Μανιχαίων αἱρεσις II, 4. Ինչպէս բացատրել, որ վաղեմախնեանցի փոխարէն Ծայրոնցիք է: Ծայրոնցիք ևս աղանդաւորներ էին, Սիդոնացիք, որոնց մասին յիշում է Դաւմասկ(իոս)ը. Σιδώνιοι δε κατὰ τὸν αὐτὸν συγγραφέα πρὸ πάντων χρόνων ὑποβιβενται καὶ πόθον καὶ ὁμύχλην. (Damascius. p 385. ed kopp.)

Էջ 32. Այլ եթէ ոչ իսկ իցէ, ասեն, չարն և ոչ յաստուծոյ եղև իսկ, ուստի եղև... այլ մեք ասեմք, եթէ ասնեն չարիք զործողք և ոչ որպէս նոցայն ասեն թէ կենդանի է չարն թնորհամբ:

Հմմ. եզ. յաճախ կրկնուած հիմնական միտքը:

Էջ 89. Վնասակար է արիւն ջրու... մանրագորաւ բազում անգամ բժիշկը ցուէ ածեն:

Հմմ. եզ. 66. եթէ արիւն (ցլոյ) ոք ըմպիցէ սատակի... զմանրագորն քնածու լինի քնհատաց...:

Զ. էջ. 133. Եւ գնացք իմն են, ասեն, յաշխարհին Եւրպիսիոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն յաւելուածս լիութեան իւրեանց, որ երբեմն զիշանէ ի լիութենէ աստի և այն, ասեն, ըստ գնացից լուսնին փոփոխի...:

Հմմ. Եզ. 215. Եւ յԵւրոպայ տեղիք ինչ
են ծովուց, որոց ջուրն ըստ անել լուսնին՝
անէ և ըստ ընուլն՝ ընդ և ըստ պակասելն՝
պակասէ (տ. Հ. Թորոսեան, Բազմ. 1889,
էջ 317 ծանօթ.)

Էջ 134. Բայց անհամ և սնոտի պատ-
մութիւն, որ իբրև զբարբաճ ծերութեան
զատանցելոյ անկելոյ ի մտաց իցեն, այն-
չափ ծաղու և արհամարանաց արժանի
են... շարժելով, ասեն, շարժեն մարդիկ
զլուսին և յերկիր իջուցանեն: Ինչ զոր
աստուած հաստատեաց եղ անշարժ ի տեղ-
ւոյ իւրում և յորինեաց եղ զնա ի մըշ-
տեղանաց, զիարդ կարիցեն զիւթութիւնը
կախարդաց շարժել ի տեղւոյ. քաւ մի
լիցի ասել մեզ զայս և կամ լսել: Եւ որ
տեղի բաւական էր ընդունել զայն որ
սահմանեալ կայ ի մեծ աստիճանին զօրու-
թեամբն աստուծոյ:

Հմմ. Եզ. 217. Եւ չէ հնար լուսնի յեր-
կիր իջանել, որպէս կախարդաց տեսեալ
ի ժամանակի հրամանաւ աստուծոյ ըզ-
լուսնոյն արինեալոյն լինելոյ զկերպա-
րանն զիւր նմանել լուսնի բարբաճին
թէ զլուսնի իջուցանեն, որում չէն մարթ
լինել թէ որ քան զբազում աշխարհս մեծ
է՝ թէ ի կաւ մի փորդիկ ամփոփիցի:

Էջ 187. Ջհատ կամ զգորիզ իրիք
յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ կտրէ և
դնէ, զի մի բուսցին ի հիւթոց խոնաւու-
թենէ... և զարձեալ եթէ խոնաւեցին
հատըն, հանէ առեզբոր մըջիւնոցին ար-
կանէ տարածոց և ցամաքեցուցանէ... յոր-
ժամ գիտէ թէ արեւ կայ և պարզ իցեն և
ոչ անձրեւ:

Հմմ. Եզ. 174. Որպէս և մըջեան յա-
մարանոյն պատրաստելոյ զկերակուր և
ընդ երկու զհատն կտրելոյ զի մի բուսա-
նիցի և ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն
յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ:

Էջ 114. «Եղիցին լուսաւորք ի հաս-
տատութիւն երկնից»...

Եւ դարձեալ ասէ. եթէ եղիցին ի նշա-
նակս և ժամանակս և յաւուրս և ի տա-
րեկանս: Յոյժ պատշաճ և պիտոյ են աշ-
խարհի և մարդկան նշանք որ լինին ի

լուսաւորաց... զի վասն խոնաւոյ ժամա-
նակաց բազում անգամ վարդապետը լի-
նին մեզ օղոյն պտտորոտեան և դատեալուն
հոգմոցն ստեղծամանաց: Փանգի է ինչ որ
երևի յարեգակնէ և տէր մեր յայտնեաց
մեզ յասելն թէ յորժամ տեսնիցէք զի
ամպ արեւտից և ասէք թէ անձրեւ լինի
և լինի. և յորժամ հարաւ շինցէ, ասէք: Եթէ
խորշակ ընթանայ և լինի այդպէս. և յոր-
ժամ դարձեալ ընդ երեկս կարմրանայցեն
երկինք, զպարզոյ յայտ առնեն, և յորժամ
ընդ առաւօտն կարմրանան, զանձրեւի նշան
ցուցանեն...

Ձի յորժամ ընդ ծագել արեգականն
մթազոյն ելանիցէ և արեան և կայծական
նշանակ ունիցի ճառագայթիւք ըստ փո-
փոխմանց խստաշունչ օդոցն և եթէ ի նմին
կերպարանս կացցէ, օդն պղտորեալ և
յուզեալ ոչ յատակեացի ի գոյնն մթազոյն
ոչ լրթաացի և հոգմը խստաշունչ և յա-
ւելցին և ամպ և քան զկս բազմացի
զերկար խոնաւայուզից և զսաստիկ ան-
ձրեաց յայտ առնեն:

Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսնին
ամպոց և ունիցի մոայլ զարեգակն ամպոց,
ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին..

Հմմ. Եզ. ԻԴ. 185-187. Արար աս-
տուած զլուսաւորան մեծամեծս և եղ զնոսա
ի հաստատութեան երկնից և այլն մինչև
187. (տ. Բազմ. 1889, էջ 314 ծանօթ.)

Էջ 116-120. Աստեղագէտների ուս-
մունքը աստեղատունների և մարդկանց
բախտի յարաբերութեան մասին, հմմ. Եզ.
Բ. 14: Մանաւանդ Վեց. 120. Խոյ: Ճոյս
Բ. 14: Եղն-գործուն և հնազանդ, կարիճ՝
մարդասպան:

Հմմ. Եզն. 156. Եզն՝ հօդ և բարեն-
շան, խոյն՝ մեծատուն, կարիճ՝ չար...

Էջ 122. Որչափ արդեաւք թագաւորք
ծնանին հանապազ... արդ ընդէր ոչ հա-
նապազ ծնանիցին թագաւորք և վասն էր
ի հարց առ որդիս կարգի զայ ժառան-
գութիւն թագաւորաց... մինչև էջ 123
Ոգիւս ծնաւ զՅովսէփ և այլն:

Հմմ. Եզ. 160. ապա ոչ թագաւորի
որդի թագաւոր լինէր... որպէս Դաւթայ

որդի Սողոմոն ի հօրն աթոռ նստաւ կայլն:

Էջ 123. Աւելորդք են դարձեալ դատաւորք և այլն. — Հմմ. Եզ. 160-162 չէ պարտ ոչ Թագաւորաց մահու հրաման տալ և ոչ դատաւորաց:

Հետաքրքրական են նաև դարձուածնեքի և բառերի գործածութիւնը երկուսի մօտ. որ. Վեց. 45 ընդարտյա բնութեամբ տնկեալ են ի մեզ, հմմ. Եզն. յաճախ գործ է ածում և ոմանք ուզում են ուղղել տնկեալ յանաբարարի:

Նոյնպէս և էջ 17, 49. զլոյծ և զխաղաց բնութիւն ջուրցն, Հմմ. Եզ. 197 լոյծ բնութիւն ջուրցն. խաղացական էջ 211. և Եզնիկի խաղաց կարիք չկայ ուղղելու խախտց:

Այլ և անկերպարան, անիրան (Վեց. 26, 28), անհամ պատմութիւն (121, 61, 85), Եզ. 196 անհամութիւն: Սարմապատ (Վեց. 54) յողապատ (Եզ. 72) Ծիւրեցին ծնկեցին (Եզ. ծիրի ծնկի), դանգաջէ (Վեց. 62), Եզ. 196, բարբաջ ծեւրութիւն բանդագուշեալ: Ապա եթէ յամառիցի ոք (Վեց. 12): Այլ և աման լուսնի (113), անիւ լուսնի (112), և այլն:

Ի նկատ առնելու է նաև յափշտակեցաւ յերրորդ երկինս (Վեց. 48) նախադասութիւնը, թէ և մեկնութիւնը զանազանութիւն է Եզնիկից:

Յաճախապատուի մէջ ուշադրութեան արժանի են այն կէտերը, ուր շեշտում է անձնիշխանութեան նշանակութիւնը, որով մօտենում է և յարում Եզնիկին:

Էջ 17. Եւ անձնիշխան կամօք երկնաւորք և երկրաւորք, մարդիկ և հրեշտակք:

Այլ թէ ասիցէ ոք, որպէս ներեաց աստուած աստանայի այնքան տարածել ըզմուրութիւնն զանօրէնութեանս, իմացիք, զի իշխանական կամս է հրեշտակաց և մարդկան որ յաստուծոյ պատուեալ:

Հմմ. Եզ. 76. ընդէր հոյծ զնոսա ի կոբւս ընդ միմեանս: Այսու զանձնիշխանութիւնն աստանայի և զմարդոյն կամի խափանել և այլն.

Էջ 19. Զճմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն և այլն:

Հմմ. Եզ. յառաջարան:

Էջ 25. է ինչ և ի սողունս իրաց ինչ ի պէտս, որպէս յօժիցն ասէ զթերակէն: Հմմ. Եզ. 63. զինչ չար քան զօժ կայցէ և ի նմանէ թերիակէ:

Էջ 26. Զի զտարերս ամենայն աստուածս արարին զնշաւորս և զանշունչս, զջուր և զհուր: Զի ջուրն ի պէտս կենդանաց արարան յաստուծոյ, որ արբուցանեն զերկիր և դարձեալ ապականին ներխոյժ և նուազելով: Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ որ դարմանեց վառի և ըսպասաւորէ մեզ և ի պակասել կերոյն զիջանի և ապականի: Նոյնպէս և հողմք և ամպք:

Հմմ. Եզ. 15-16. Եւ կամ զհուր, որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինչն, զի յորժամ կամիցիս վառիցես և յորժամ կամիցիս խափուցես և այլն... և զնեքրին և զարտաքին աղտեղութիւնս մեր նորքը արբեմք:

Էջ 29. Զի և զազանք ոչ եթէ բնութեամբ եղեն չարք, որպէս ընտելութեամբն ցուցանին առ Թովդչան և առիւծ և ինծ և արջ հնազանդին մարդկան, որպէս եզն և շուն և այլն ամենայն...

Հմմ. Եզ. 148-149:

Էջ 63. Ապա եթէ ի նոյն յամատեայ կայցեն ի չարիսն. Հմմ. Եզ. 59, 198 — Աստուած ոչ սատակէ և ոչ բառնայ զյիշատակս ստահակաց և անզգամաց. ոչ կամիմ զմահ մեղաւորի:

Հմմ. Եզ. 76, ես ոչ ընդ ձեր մահ կամէի. Համեմատութիւնները բաւական են ցոյց տալու, որ Եզնիկը մէն միշակ չէ, այլ որ նա և կապեր ունի միւս երկերի հետ, և Եղծի խմբագրութեան հարցը այնպէս անկնճիռ չէ, ինչպէս թւում է: Խոստովասնիւ է, որ Փաւստոսը, Եղիշէն, Յաճախապատուը, Ազաթանգեղոսը, քան Եզնիկն աւելի բախտաւոր վիճակի մէջ չէ և զքոնըւում է նրանց հետ միևնոյն ցանցի մէջ:

(Շարայարեկի)

ՊՐՈՖ. Ն. ԱՐՈՅՏ